

ՄԱՐԴ ԻՐ ԿԱՄՔԻՆ ԵՒ ՀԱՒԱՏՔԻՆ ԱՐՏԱՅԱՅՏԻՉՆ Է

1. Նիւթական Իրականութիւնները ժամանակաւոր են
Մինչ Հոգեւոր Իրականութիւնները՝ Յաւիտենական
2. “Դուք Ձիս Կը Փնտռէք՝ Որովհետեւ Հացերէն
Կերաք ու Կշտացաք”
3. Մարդկութեան Ինքնութեան Հաւերժացում
4. Անփոխարինելի և Բացարձակ Յաղթանակը
Յիսուս Քրիստոսի Յարութիւնն է
5. Թէ Ինք Տեսած է Տէրը

**ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԳԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2009**

**“ՆԻՒԹԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԵՆ
ՄԻՆՉ ՀՈԳԵՒՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝
ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ”**

--Բ Կորն.Գ.18

Աջքով տեսանելիութիւնը իր սահմանաւոր ջրջանակը ունի, **մտքով** երբ կը տեսնուի՝ ենթակային հորիզոնը շատ աւելի կ'ընդարձակուի, իսկ **հոգիով** տեսնելը՝ ոչ հորիզոն ունի և ոչ սահմանում, այլ տեսողութեան թռիչքը կը տեսնէ թէ՛ ժամանակի և թէ՛ միջոցի անհունութիւնը: Արուեստի գերազանց զգայարաններն են լսելիքը և տեսանելիքը: Աղօթքը նման ձգողականութեան, անտեսանելի հոգեշունչ զօրութիւն մըն է:

Տեսնե՛լ միայն արտաքին կերպարանքին նայիլ չէ: Տեսնե՛լ մարմնական աջքով ակնարկ մը նետել չէ, այլ *մտքով և հոգիով* ներթափանցել, ըմբռնել և ճանչնալ է առարկան, անձնաւորութիւնը և դէպք եղելութիւնը: Տեսողութիւնը միայն մարմնական աջքով չէ, այլ հոգիի՛ն և սրտի՛ն տեսանելիութեամբ է: Աստուած տեսանելի բաներով անտեսանելին յայտնի կը դարձնէ: Գրի անհրաժեշտութիւնը հարկաւոր դարձաւ տեսանելի դարձնելու համար Աստուծոյ սէրը մարդոց հանդէպ: Անմարմին իսուքը (Բանը) մարդեղանալով Անշօջափելին՝ Հայր Աստուած, տեսանելի ու ջօջափելի եղաւ: Խորհուրդը արտաքին զգալի նշանն է, որուն միջոցաւ տեսանելի ձեւերու սակ անտեսանելի ջնորհները կը ստացուին:

***Հաւատալ ու սիրել այն զոյգ ճառագայթարձակ
ջողերն են, որոնք կը սրբացնեն մարդը և
տեսանելի կը դարձնեն Անտեսանելին:***

Ինքնաջարժ մը նիւթէ կը բաղկանայ (matter) բայց նիւթէ աւելի բան մը ունի իր մէջ: Ինքնաջարժ մը ի՞նչ համեմատութեամբ **նիւթ** կրնանք համարել, և ի՞նչ համեմատութեամբ **արծե՛ք**: Մենք միշտ հակամէտ ենք նիւթը ջեշտել կեանքի մէջ, սակայն նիւթը որքա՞ն էիջ իրագործումներ կրնայ ունենալ առանց ստեղծագործ մտքի և կազմակերպչական կարողութեան: Մարդ արարած բաղադրութիւնն է **նիւթի** և հոգիի, մահուան և յաւերժութեան: Նիւթի պաշտամունքը, այսօր դարձած է գերակշիռ: Մինչդեռ ջարժման և զօրութեան սկզբնապատճառը նիւթին մէջ չէ: Լուցկի մը նիւթ է ու ջօջափելի առարկայ մինչեւ որ զայն վառես, այնուհետեւ ան կրա՛կ է ուժ ու զօրութիւն, նոյնպէս ալ բառերը կը դադրին ինձ համար գիր ու տառ, նիւթական իրականութիւններ ըլլալէ, ու կը դառնան հոգի և ուժ, զգայնութիւն և

շարժում:

Հաւատացեալը կ'աղօթէ կը յուսայ և հոգեկան աչքերով կը տեսնայ ու կ'երկրպագէ Անտեսանելին: Գիտայետազօտական և նիւթական իմացումով ինչպէ՞ս բացատրել այդ բներեւոյթը: Հոգեկանի կարեւորագոյն առանձնա-յատկութիւնը անոր իդէալական աննիւթական բնոյթն է: Կեանքի ծագումը՝ իտէալիստները կը պնդեն թէ Աստուած է, իսկ նիւթապաշտները կը պնդեն թէ նիւթական ծագումէ յառաջ եկած է: Ժամանակը որ անշօշափելի է, մեզ կը փոխադրէ նիւթէն դէպի *աննիւթականը*: Անսահման այլազանութիւն ներկա-յացնող նիւթական աշխարհը կը բաղկանայ 90-92 սահմանափակ տարրերէ: Աստուծոյ սէրը նիւթական բան մը չէ, որ վաճառուի և ոչ ալ մասնագիտութիւն մը, որ ուսանելով ստացուի: Աստուծոյ սէրը բառերով չի բացատրուիր, թուանշաններով չի չափուիր, զգացումներով չի թարգմանուիր: Աստուծոյ Սէրը հաւատո՞ւմ և փորձառութեամբ կը ճանչցուի: Մարդկային գիտակցութիւնը նիւթ չէ ոչ ալ նիւթեղէն: Մարդու հոգեւոր կոչումը իշխե՛լ է նիւթի և մարմնականի վրայ: Աստուած մէկ է իր իսկութեամբ և բնութեամբ և բազում Իր յատկանիշներով և հանգամանքներով:

Վախճանական դէպքերու ակնկալութիւնը, Յիսուս Զրիստոսի մարմնա-կան Յարութեան պատճառաւ, սովորական հաւատք և յոյս մըն էր սկզբնական դարու նիւթական ու ընկերային հալածանքի ենթարկուած հաւատացեալներու համար:

Մարդ արարած ունի հիասքանչ D.N.A.-ի իմացնող և տեղեկացնող քջիջային կազմակերպութեան ցանց մը, որ ենթակային ինքնութիւնը և իւրայատկութիւնը կը փաստէ: Ո՞վ կամ ուրկէ՞ սոյն կենսունակ մասնիկ-ները ստացած են կազմախօսական կարգաւորում և սարքաւորում: Նիւթակա՞ն և մարմնեղէ՞ն գոյութիւնը պարզեւած է սոյն հրաշակերտ կազմածքը, թէ հոգեկա՞ն ՄԻՏԵԸ:

Նախ ՄԻՏԵԸ՞ կու գայ, թէ նիւթը և մարմինը:

ՄԻՏԵԸ նիւթականէն աւելի *անձ նակա՛ն* և *գիտակցակա՛ն* իրողութիւն մը կը ներկայացնէ տիեզերքին մէջ, ոչ պարզ **զօրութիւն** մը: Զօրութիւնը առանձին, առանց մտքի, չի կրնար հնարել գեղեցկութիւն, արդարութիւն և բարին: Եթէ Անձնաւորութիւն, Ինքնութիւն և Հեղինակաւորութիւն ճանչցուած ՄԻՏԵ-ը՝ Աստուած գոյ չէ, մարդ ինչո՞ւ կ'աղօթէ ու կը շարու-նակէ աղօթել և հնազանդիլ Գերագոյն Մտքի կամ Բացարձակի: Եթէ կը փափաքիս գտնել, փորձէ՛ աղօթել և հանդիպիլ Աստուծոյ՝ Գերագոյն **ՄՏՔԻՆ**:

Մեծաշուք հանդէսներով կը տօնախմբենք Յիսուսի Ս. Ծնունդը, և մեծադորոք երգերով ու ցոյցերով կը կատարենք Մարդեղացեալին Տօնը: Այս բոլորը արտաքին ցոյց է միայն, և վայելք. մարդիկ նիւթականացուցած են

զայն, հեռացած են Անոր Խորհուրդէն ու Ոգիէն: Սուրբ Ծնունդը, այլեւս, հաճոյքի--մարմնական, նիւթական հանդէս դարձած է--բարեկամներու նուէր տալու և ստանալու օր մը միայն: Յիսուս մէկ անգամ ծնաւ մարմինով, սակայն կը վերածնի ընդմիջտ հոգիով, ու կ'ապրի Ձինք սիրո՛ղ մարդոց սիրտերուն մէջ:

Նիւթականը վտանգաւո՛ր իրականութիւն է: Փոխանակ ծառայելու կրնայ տիրապետել և գերելարել: Արեւմտեան քաղաքակրթութեան մէջ մարդ կտրուած է անցեալի իր հոգեւոր և ինքնութեան ակունքներէն ու կ'ապրի մեքենականացած կեանքի հեւքը, հետապնդելով նիւթականը և մարմնական ցանկութիւնները: Իրողութիւնները դիտած ատեն պէտք է մոռնալ ոգին՝ որ հետզհետէ կը խմորուի հոգիներուն մէջ և բնականոն ընթացքով մը նոր և խորհրդաւոր ուղղութիւն մը կու տայ ենթակային: Նախ ուրուագիծը Ճարտարապետի ուղեղին մէջ յետին մանրամասնութեամբ ներկայ է: Լրիւ, մինչեւ որ աննիւթը կը դառնայ ծրագիր, հիմ, քար շաղախ, տաճար, աղօթք և երկրպագութիւն: Գիտութիւնը կը խորհրդանշէ Հոգեւորը, ինչպէս տիեզերք իր ճարտարապետական կազմուածքով, կը խորհրդանշէ Հոգեկանը՝ Արարիչ Աստուածը:

Նիւթականին ընծայուած անհամեմատ կարեւորութիւնը և բարոյական արժէքներու արհամարհումը, հաւատացեալը կը դարձնեն դէպի այլասերում՝ դրամապաշտութիւն: Նիւթապաշտ հասարակութեան և բարոյական արժէքներու անտարբեր դարու մը մէջ, հաւատք առ Աստուած գոյութենականի պահանջ մըն է հոգեկան անանկութեան դէմ: Աստուած ճանաչումը հաւատքի ուժն է, նախապաշարումի և նիւթապաշտ ագահութեան դէմ: Մամոնայի ծառայել կ'ենթարդէ նիւթապաշտ ըլլալ: Արթննանք նիւթապաշտ և ատելալառ ըմբռնումներէ ու տեսնենք սիրո՛յ ու հաշտութեան իրագործումները:

Այսօր, սեռային ու ոճրային երաժշտութեամբ ու վայրաք տոփական մշակոյթով, Արեւմուտքը յառաջ կը տանի իր բոնաստիրական գաղթատիրութիւնը: Եկեղեցիներու ամպիոնէն մարդահաճոյ և ազգայի՛ն քարոզներ կ'ուզեն լսել, պէտք է սիրաշահիլ ամբոխը, կ'ըսեն աշխարհիկ իմաստունները, ու յարմարիլ այսօրուան հաճոյստք ու նիւթապաշտ աշխարհին: Եկեղեցիի մը յաջողութիւնը **նիւթի**՝ դրամական հատոյթին մէջ կը փնտռեն և ոչ թէ անոր բարոյական ու հոգեւոր կեանքին մէջ:

Նիւթապաշտները կը ջանան նիւթական հարստութիւն դիզելով գերադասել մտքի և լոյսի երկրպագուները: Իսկ մարդկութեան փարոսները, հոգիի ծառաները առիւնքուած Գերագոյն ուժէ՝ Աստուծմէ, կը փորձեն հակազդել ստորերկրեայ մութ ուժերուն՝ Մատանայի ձգողութեան: Իրենց ուսերուն վրայ կը կրեն Քրիստոսի խաչը: Կը տխրին մարդկային ողբերգութեան առջեւ, կ'ողբան անմեղ մանուկներու մահը, կոյսերու բռնաբարումը, աղջիկներու և կիներու ստրկացումը և վաճառքը:

Պետրոս առաքեալ կանգնած ներկայ Արեւմտեան աշխարհի սակարանին մէջ կ'ըսէ *ամուսնացան* Քրիստոնեաներուն. «Կաղաչեմ, սիրելիներ՛ք, իբրև աշխարհի մէջ պանդուխտներ և օտարականներ՝ հեռո՛ւ մնացէ՛ք մարմնական ցանկութիւններէն, որոնք հոգիին դէմ կը պատերազմին»--Ա. Պետ. Բ. 11:

Կարելի է խօսիլ աստուածայայտնութեան մասին որ կը գերազանցէ պատմականը և վարկածային տեսութիւնը ու կը զգացնէ հոգւոյ Բացարձակին հպումը: Իր մէջ ունի հրապուրելու կարողութիւնը, որ հազուագիւտ է նիւթապաշտութեան մէջ: Այդ անկջոռելի և անջօջափելին, հաւատա՛լն է որ Քրիստոս կը փնտռէ, մարդկային աստուածապարգեւ լոյսի ցոլփերուն մէջ, որ մարդ արտայայտելու է, ստանալու համար խաղաղութիւն, առողջութիւն և հոգւոյ փրկութիւն:

Ուիլիըմ Պլէյֆ, Անգլիացի հոգեւուրբ արուեստագէտ բնաստեղծը, ներբողեց ու հռչակեց թէ երեւկայութիւնն ու խորհրդաբանութիւնը աւելի՛ գերակայ է քան 18-րդ դարու նիւթապաշտական բնապաշտութիւնն ու արուեստականութիւնը (artificiality): Ոմանք ջլացած ի տես Արեւմուտփի մէջ իրագործուող նիւթական յառաջդիմութեանց, կը բացագանչեն. *«Հոն՝ ուր մեռած է ճշտութեամբ, կը յայտնուի մարդոց մեծութիւնը»*:

1. Արեւելէն ծագած է լոյսը, միակ Աստուծոյն, սիեզերփի Արարիչին, գաղափարը: Արեւմուտփէն կու գայ, այժմ, ու կը սողոսկի Արեւելփի մէջ, մթութի՛ւնը անաստուածութեան ու նիւթապաշտութեան բոյներէն:
2. Կը կարծէ թէ գիտութիւնը պիտի պարպէ՝ սիեզերփը՝ իր խորհուրդէն ու պիտի դատարկէ նոյնի՛նքն Աստուծմէ:
3. Աէ՞րը, բարեկամութի՞ւնը, գաղափարակա՞նը, կրօ՞նքը, կը համարուին սոսկ ջղային բաբախումներ:
4. Արեւմուտփը չէ՛ ըմբռնած տակաւին՝ թէ ինք արարածն է, ո՛չ թէ Արարիչը:
5. Գետը՝ ակունքո՛վ է գետ: Առանց ակունքի՝ չկա՛յ գետ:

Հակառակ մարդկային ազնիւ գաղափարախօսութիւններու, մենք կ'ապրինք այնպիսի երկրի մը մէջ, ուր նիւթապաշտութիւնը, դրամապաշտութիւնը, աւելին ա՛լ աւելին ունենալու տենչանքը կը հասնին իրենց գագաթնակէտին: Կը ստեղծուին պայմաններ անձը դարձնելու ինքնակեդրոն, եսասէր, այլամերժ, ընդունելու այն վիճակը զորս ուրիշներ կանխաւ վճռած են, առանց մեր հաւանութեան:

Մարդկային ուղեղը, որ նիւթեղէն է, կը պատկերացնէ մարդկային աննիւթական մտածումները և խորհրդածութիւնները: Գիրն ալ, որ պատկերալից է, տեսանելի և ջօջափելի կը դարձնէ ուղեղին աննիւթական ըմբռնողական խորհուրդները: երկիրն ու երկնայինը, նիւթն ու նիւթեղէնը, իմանալին և պաշտելին միացնող թելը խորհրդապաշտութիւնն է: Եկեղեցին Տարուցեալ Յիսուս Քրիստոսի **նիւթեղէն** Մարմինն է: Երածջութիւնը աննիւթ և անտեսանելի է, բայց և այնպէս, ան ըմբռնելի արտայայտութիւնն է

տիեզերական հոգեւոր իրականութեան:

Խորհն ու Իմաստը երեւոյթներ են իրականութիւններու, որոնք չեն երեւիր, և որոնց մարդիկ կամ շատեր չեն նայիր իսկ: Պատմական ամէն երեւոյթ, ամէն դէպք որ կը հանդիսադրուի այս երկրագունդին վրայ, խորհրդաւոր ու անտեսանելի իրողութեանց հիմքին վրայ կը կենայ՝ նման այն շէնքերու, որոնց հիմերը աչքերէ ծածկուած են: « Աստղերը՝ լոյսը չեն, բոյսը՝ կեանքը չէ, խօսքը՝ մտածումը չէ, արցունքը՝ ցաւը չէ, ժպիտը՝ ուրախութիւնը չէ: Ասոնք գոյութիւն ունեցող իրականութեանց արտաքին տեսանելի փաստերն են միայն, ոչ խորհուրդը»:

Պատկերներ, արձաններ, մոմեր, խուկեր, խաչեր կարելոր խորհրդանշաններն են հոգեւոր իրականութիւններու և կը ձգեն խոր տպաւորութիւններ մտածող հաւատացեալներու հոգիներէն ներս: Աստուծային Գերազանցութեան տեսանելի իրականութիւնը. --Հողը կը վերածուի բոյսի, ծառի ցորենի: Զուրը կը վերածուի պտուղի, ձմերուկի: Իսկ արեւի ճառագայթները՝ կը վերածուին վիթամիսի և ծաղիկներու գոյներու:

Ժամանակը կը հոսի դէպի յաւիտենականութիւն, ինչպէս գետը՝ դէպի ովկիանոս: Տիեզերքի Արարիչը մարդուն մէջ դրած է անմահութեան իղձը, մարդը կը տենչայ մշտական կեանքի, կ'ուզէ ապրիլ յաւերժօրէն: Այս ըղձանքը ինքնին գրաւականն է յաւիտենականութեան:

Բաւական չէ մտածել զԱստուած, այլ անհրաժեշտ է փորձառաքար *ճանչնայ* զԱյն: Մտածուած աստուած մը վերացականութիւն է, իսկ փորձառաքար ճանչցուած Աստուած, Արարիչ՝ ճշմարիտ Աստուածն է: Մինչեւ որ Աստուած չբնակի մարդուն մէջ, անոր ամենօրուայ գործունէութեան մէջ, այդ հաւատքը արժեք մը զօրութիւն մը չի գործէր ենթակային մէջ: Աշխարհի մէջ կայ օր՝ ջունչ, սակայն այդ ջունչը եթէ մեր թոքերուն ջնջառութեամբ մեր մէջ չտարածուի, օդին և ջունչին հո՛ն ըլլալը մարդ արարածին բնաւ արժեք մը չի ներկայացներ: Նոյնն է նաեւ Աստուծոյ հոն ըլլալը: Աստուծոյ մեր մէջ ըլլալն է որ Յիսուս եկաւ պատմելու և բացատրելու:

«Օ՛ր, ի՞նչ խորունկ են Աստուծոյ առատ ողորմութիւնը, իմաստութիւնն ու գիտութիւնը: Որքա՛ն անհնձելի են անոր վճիռները, և անգնձելի են անոր ճամբաները: Եւ իրապէս, "Ո՞վ կրցաւ երբեք Տիրոջ Միտքը կարդալ, կամ ո՞վ երբեք խորհուրդ տուաւ Անոր. որ փոխարէնը առնելիք ըլլայ Անկէ»:

Որովհետեւ ամէն ինչ Իրմէ է, իրմով և Իրեն համար գոյութիւն ունի: Յաւեո փա՛րճ Իրեն: Ամէն:--Հռոմ. ԺԱ.33-36:

Արբութիւնը ո՛չ թէ Աստուծոյ ստորագելիներէն մին պարտ է ճանչցուիլ այլ՝ խորագո՛յն իսկութիւնն է Աստուծոյ: Աստուծոյ գլխաւոր յատկանիշը, Իր Արբութիւնն է: Աստուծոյ Արբութիւնը այդ անթափանցելի տարածքն է որ Նարեկացին կը կոչէ *անհեղձ ինայի*: Աստուծոյ հիմնական ու եզակի յատկանիշը **ԲԱՐՈՒԹԻՒՆՆ** է:

Յիսուս Զրիստոս Իր բարեխօսական աղօթքով կը խնդրէ Հայր Աստուծմէ, որ *«Արքագործէ զանունն»* (աշակերտները), այսինքն՝ *«Զու սեփականութիւնդ դարձուր»*, որովհետեւ աստուածաշնչական լեզուով քան մը «սրբել» կը նշանակէ Աստուծոյ *յատկացնել*, վերապահել յատուկ նպատակի--Յով. ԺԷ.17: "Խ որհուրդ" բառը թարգմանութիւնն է յունարէն (mysterion) բառին, որ կը նշանակէ "ծածկուած" կամ "թափնուած" քան: Լատին եկեղեցին զայն կ'արտայայտէ (sacramentum) բառով, որ կը նշանակէ "սրբագործում, նուիրականացում": Պօղոս առաքեալ եւս կը յորդորէ Թեսաղոնիկէի եկեղեցին ըսելով. «Այս է Աստուծոյ կամքը՝ ձեր *սրբացումը*»-Ա. Թես. Դ.3: Սրբացումով նիւթականը՝ Հոգեւորին, հունաւորը՝ Անհունին, և ժամանակաւորը՝ Անժամանցելիին հաղորդակից կը դառնան:

Աղօթքը կը սկսի երբ այդ Ամենակալը և Հեռաւորը կը դառնայ Մերձաւորը և հետը կը խօսիմ որպէս *Հայր Երկնաւորը*, "Դուն"-ով եզակի, ու ոչ "դուք"-ով յոգնակի: Մարդկային մօտեցումը առ Աստուած պարտ է ըլլալ խո՛ր ու ծնրադիր յարգանօք ու խոնարհութեամբ: Հոգեկան լոյսն է, որ Մագդաղենացին աղտոտ կեանքէն բարձրացուց անբասիր սրբութեան: Աղօթքի և Սրբութեան առջեւ Տրդատ թագաւոր խոնարհեցաւ, մկրտուեցաւ ու դարձաւ հաւատացողը Յիսուս Զրիստոսի:

Թոչունը չի կրնար առանց թելի ճախրել օդին մէջ, մարդը չի կրնար առանց սրբութեան թեւերուն, առանց սրտի անբծութեան թեւածել դէպի սրբութեան բարձունքը, դէպի անմահութեան Ակնադրիւրը: Անոնք են սուրբ, որոնք ապրելով հանդերձ աշխարհին **մէջ**, կը մնան աշխարհէն **վեր**:

Սրբութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է հոգիի մը մէջ: Աստուծոյ ջնորհքը, լոյսը, մտերմութիւնը, Անոր կամքին գործադրութիւնը ամէն գնով, միջոտ ու ամէն տեղ է: Այսպիսիներու կեանքի նպատակն է՝ *Եկեացէ Արքայութիւն և Զո*: Սրբութիւնը գաղափար, յորդոր ու օրէնքի ամբողջութիւն ըլլալէ աւելի **կեա՛նք և վա՛րք է**:

«Սրբութիւնը ոչ միայն *կոչում* մըն է, տեսակ մը հրաւեր՝ Աստուծմէ եկող, այլ նաեւ ուժեղ *տենչ* մը, խոր *ըղձանք* մը մարդուն մէջ, երբեմն թերեւս յայտնուող, բայց մի՛ջտ իր ներկայութիւնը մտերմաբար անձին զգացնող»--**Գարեգին Ա. Կաթողիկոս**:

Յունիս 20, 2003
Թորոնթօ

“ԴՈՒՔ ԶԻՍ ԿԸ ՓՆՏՈՒՔ՝ ՈՐՈՎՅԵՏԵՒ ՀԱՅԵՐԷՆ ԿԵՐԱՔ ՈՒ ԿԸՏԱՅԱՔ”

Յով. 2. 26:

Հացի խնդիրը սուրք է, աղօթքի մաս կազմող մաքրութեամբ, բայց ոչ ուրիշներու արեան գնով, այլ ենթակայի՛ն անձնագոհութեամբ: Մարդիկ ինչո՞ւ կը փնտռեն Յիսուս Բրիստոսը: Մարդկութիւնը մինչեւ որ չունենայ յուսախաբութիւն և բարոյալճում, չի փնտրեր հոգեկանն ու երկնային առաջնորդութիւնը: Մարդ արարած կը խոնարհի Գերբնականին՝ Աստուծոյ երբ կը տեսնէ իր անկարողութիւնը և նիւթականին վախճանն ու հետեւանքը: Մարդ արարած իր երիտասարդութեան փնտրելու է, Գերբնականին մէջ զԱստուած:

Ան փնտրելու է զԱստուած ո՛չ թէ Արեւելեան թագնագիտական իմաստասիրութեան մէջ, այլ՝ Յարուցեալ Յիսուսի պատուէրներուն և յորդորներուն մէջ: Նոյնիսկ Յարութեան առաւօտուն հրեշտակները ւաւտեցին, Յիսուսը փնտրող կիներուն, ըսելով. *«Ինչո՞ւ որչք մտել ներսն և հետ կը փնտռէք»*--Լուկ. ԻԴ.5: Երկնային պատգամաւորները ըսել ուզեցին աշխարհի, թէ *ինչո՞ւ կը փնտռէք Կեանքն ու Ճշմարտութիւնը մարդկային իմաստասիրութեան մէջ*: Մարդկային իմաստասիրութիւնը վախճանական է՝ վերջ ունի, իսկ երկինքէն իջած Հացը յաւերժական է ու յաւիտենակա՛ն կեանք կու տայ, որովհետեւ Արարիչ Աստուած լրի՛ւ յայտնուեցաւ մարդկութեան մի միայն Իր Միածին Որդւոյն Յիսուս Բրիստոսի մարդեղացումով:

***«Ան որ կը մօտենայ Աստուծոյ պարտի հաւատալ թէ
Աստուած կայ և վարձաճատոյց կ'ըլլայ անոնց՝ որոնք
կը փնտռեն զինք»***--Եբր. ԺԱ. 6:

Իմաստասէրներ ու բանաստեղծներ, ճանեցին ու տաղերգեցին ա՛յն ինչ որ մարդկային իմացականութիւնը ընծայած էր հողաշէն արարածներուն: Մոգերը հարցուցին, ըսելով. *«Ի՞նչ է Հրեաներու Այգճան որ ծնաւ, վասնզի անոր աստղը տեսանք Արեւելի մէջ և եկանք Անոր երկրպագելու»*--Մատթ. Բ.2 Իմաստասէրներ, իրենց բոլոր կարողութեամբ, միայն մօտեցան Բացարձակին ու յայտնեցին մարդկութեան իրենց մտացածին *տեսութիւնները*, ո՛չ աշխարհի իրողութիւնները ո՛չ տիեզերքի իսկութիւնը և ո՛չ ալ զԱստուած որպէս Հա՛յր Երկնաւորը: Կանտի սապէս ըսած է Յիսուս Բրիստոսի համար.

***«Յիսուս, մեր իմաստասէրներուն նման միայն չ'ուսուց,
այլ ավրեցա՛ւ իր ուսուցածը: Ան դարձաւ մեր օրինակը»***:

Յոյն իմաստասիրութիւնը չէր կրցած գտնել այն ճանապարհը որ

զիրենք պակասաւոր և աղօտ աշխարհէն կամրջէ դէպի Յիսուսի բարձրագոյն և վսեմ ճանաչումին, ապրումներուն և գեղարուեստական ըմբռնումներուն: Մարդու յոգնած մարմինը կազդոյր կը փնտռէ, իսկ հոգին՝ Յաւերժականին Լոյսը:

Աստուած կ'ուզէ մարդկութեան պարգեւել ա՛յն ինչ որ մարդ ինքնիրեն չի կրնար ունենալ: «Ես»ի և փառամոլութեան հակադրութիւնը՝ հաւատքի՝ աշխարհն է, գաղափարականի և բարոյական գեղեցկութեա՛ն աշխարհը: Մարդ արարածը միջոտ **ստանալ** կ'ուզէ, իսկ Հայր Աստուած՝ տա՛լ կը փափաքի: Աստուած կը պարգեւէ ու կը շնորհէ ա՛յն, որ մարդ ինքնիրեն չի կրնար ստանալ՝ աշխինքն աստուածայայտնութիւնն ու յաւիտենական կեանքը, որոնք շնորհքներ են, զոր Աստուած Իր օրհնեալ ողորմութեամբ ձրիօրէն կու տայ Իրեն հաւատացողներուն և Զինք սիրողներուն, որովհետեւ ան անսպառ Աքր է ու գթասիրտ Հա՛յր Երկնաւորը:

Աստուած, նաեւ որպէս համայնագէտ Դաստիարակ կ'ուզէ կրթել մարդ արարածը: Ան կ'ուզէ որ մենք գործենք, աշխատինք ու դառնանք արդիւնաբեր և ստեղծագործող: Աստուած չստեղծեց մարդ արարածը որպէս զարդարանք մը աշխարհի վրայ, այլ՝ որպէս Իր **գործակիցը**, որ ան գործէ երկրի վրայ ու բոլոր երկիրը դարձնէ եղեմական դրախտի:

Կենդանական աշխարհը բան մը չէ՝ փոխակերպած և ոչ մէկ բան արդիւնաբերած հազարաւոր տարիներէ ի վեր: Կենդանական աշխարհը մի միայն սերնդագործած է յաւերժացնելու համար իր նմանը: Մակայն մարդ արարածը փոխակերպած է երկրագունտը իր շինարարական կառույցներով՝ բնակարաններով ու վիթխարի կամուրջներով ու ջրամբարներով: Մարդ, նման իր Արարչին, լուսազարդած է հսկայ քաղաքները ելեկտրական աստղիկներով ու սալաշատակած է միլիոնաւոր մղոններ երթեւեկի ճամբաներ:

Եթէ Մովսէս օրէնսդիր արթննայ ու տեսնէ՝ ներկայ աշխարհը, պալատանման երկնաբարձ շէնքերը, ինքնաշարժները, սուրացող օդանաւերը, անթել հեռագիրը, հեռախօսը ու հրաշագործ համակարգիչը, որ արբանեակներու միջոցաւ երկրի որեւէ մասին հետ կրնայ հաղորդակցիլ: Մովսէս ոչ միայն պիտի ապշի, շուարի ու կակազէ, այլ իր աստուածայայտնիչ ներշնչումին պիտի հաւատայ թէ իսկապէս մարդ արարած ո՛չ թէ կապիկներէ բարեջրջուելո՛ւմ մարդացաւ, ըստ ներկայ գիտնական կոչուողներու, այլ Արարիչ Աստուածն է որ ջինեց ու գոյութեան կանչեց մարդ արարածը ու անոր շնորհեց Իր ստեղծագործող ծունչն ու անձնաւորութեան կերպարանքը:

Այս գրութեան վերնագիրը եթէ շարունակենք կարդալ, Յիսուս կ'ըսէ.
«Գացէ՛ք աշխատեցէ՛ք ոչ թէ կորստական կերակուրիին համար, այլ այն կերակուրիին համար, որ կը մնայ յաւիտենական կեանքի մէջ, և զոր մարդու ճրդիին պիտի տայ ձեզի Էանի որ զայն իր կնիքով հատատատած է Հայրն Աստուած».

Ժողովուրդը ըսաւ Յիսուսի. «Ի՞նչ ընենք որ Աստուծոյ գործերը գործենք»:

Յիսուս պատասխանեց և ըսաւ անոնց. «Աստուծոյ գործը այն է որ հաւատամք անոր գոր Ան դրկեց»:

Կեանք բաշխող Աստուածորդի Յիսուս ջատ բծախնդրօրէն կը պահանջէ որ մարդիկ հաւատան թէ Ինք Հա՛յր Աստուծմէ դրկուած է որպէս **Կենաց Հացը** ու ոչ Հին Կտակարանի մարգարէներէն մին: Կարդանք միասին տեսնելու թէ Յիսուս ինչո՞ւ այսֆան պահանջկոտ է Ան կը շարունակէ ու կ'ըսէ.

**«Ես եմ կենաց հացը. ով որ ինձի գայ՝ պիտի չանօթենայ,
և ով որ ինձի հաւատայ՝ երբեք պիտի չծարախ»:**

--Յով. 2. 35:

Անկիւնադարձ կերտող Յիսուս, ամենայն համբերութեամբ կը ջանայ հաղորդել իր աշակերտներուն, Իր առաքելութեան պատճառն ու նպատակը: Այս առթիւ Ան կ'ըսէ աշակերտներուն. «Այս է Հօրս կամքը, ով որ տեսնէ Որդին և հաւատայ անոր՝ յաւիտենական կեանքը ու նենայ. և ես վերջին օրը յարութիւն պիտի տամ անոր»--Չ. 40:

Արարիչ Աստուծոյ նպատակը երկրագունդը լեցնել չէր կեղծաւորներով, ստախօսներով, աստուածամերժ գիտնականներով և անհաւատարիմ փառամոլ մշակներով: Մոյն պատճառաւ մարդ արարած մահկանացու ստեղծուեցաւ, «որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը. որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ չդրկեց որ ան դատէ աշխարհը, այլ որպէսզի աշխարհը անով փրկուի» --Յով. 9 16-17: Եթէ մարդ անմահ ստեղծուէր, այսօր աշխարհ դժոխքի վերածուած պիտի ըլլար ստախօսներու, ապաստաններու, ազահներու, աստուածամերժներու և Աստուծոյ դէմ ապստամբողներու մեծամասնութեամբ:

Աշխարհի վրայ մարդկութեան լինելութիւնը ոչ թէ զարդարանք ըլլալու համար էր նման անասուններու, թռչուններու և ծաղիկներու, այլ՝ ծայրագոյն արարչագործութիւնը՝ մարդը նպատակի մը համար ստեղծուած էր: Մարդ արարած պարտ է դառնալ **գործակի՛ցը** Արարիչ Աստուծոյն: Մոյն պատճառաւ անոնք կը կոչուին **կանչուածներ, ընտրուածներ և հաւատարիմներ** (Յայտ. ԺԷ.14): Աստուած Իրեն հաւատացողներէն կը պահանջէ վերոյիջեալ երեք յատկանշական դրոշմները: Աշխարհի վրայ, մարդկութեան գոյութեան մեծագոյն շնորհն ու պարգեւը, իր իւրայատուկ կամքը նուիրել ու վստահիլ է Աստուծոյ այնպիսի՝ անձնուրացութեամբ, որ Ան **կանչէ** ենթական, **ընտրէ** զայն ու վստահի անոր **հաւատարմութեան**:

Մարդ արարածներուն շնորհուած **ազատ կամքը**, աստուածային մասնիկը, պարտ էր ապացուցուի՛լ նախ քան որ մարդ էակ արժանանայ յաւիտենական կեանքի: Մարդիկ որքան ալ նախասահմանումով մը ծնած ըլլան,

իրենց հաւատնով, կամնով և վճռակամութեամբ յաճախ կրնան հակազդել նախասահմանեալ ճակատագրի մը պարտադրանքներուն և փոխել անոնց ընթացքը: Ոչ ոք իրաւունք ունի ըսելու թէ ճակատագրականութիւնը անձի մը կամքէն աւելի հզօր է: Կատարել Աստուծոյ կամքը, ծայրագոյն հաւատարմութեան նշանն է համայն հաւատացեալներուն և Աստուծոյ գործակիցներուն: Անմահարար Հաց Յիսուս կ'ըսէ հինգ հազարին, որ Իր բազմացուցած հացերէն կերած էին.

«Ես իջայ երկինքէն՝ գործադրելու ո՛չ թէ ի՛մ կամքս, այլ անո՛ր կամքը՝ որ որկեց զիս: Որովհետեւ զիս որկորդին կամքը սա՛ է, որ ո՛վ որ տեսնէ Որդին ու հաւատայ իրեն՝ ու նենայ յախտենական կեանքը. Ե՛ս ալ յարութիւն առնել պիտի տամ անոր՝ վերջին օրը»--Ձ. 36, 40:

Ապրող Խօսք Յիսուս երբ կը տեսնէ թէ իր հետ վիճողները նախապաշարեալ և սրտնջող փառամոլներ են, կ'ըսէ անոնց երկրորդ անգամ.

«Ո՛չ մէկը կրնայ գալ ինձի՝ եթէ զիս որկող Հայրը չՔաշէ զայն»:

Անստուեր Լոյս Յիսուս նայեցաւ իր շուրջը, դիտեց այն մարդիկը որ կերած էին հինգ հազարին բաշխուած հացը ու տակաւին չէին ուզեր հաւատալ Իրեն, որովհետեւ նախապաշարուած էին իրենց դպիրներու վարդապետութեամբ, Ան ըսաւ անոնց.

«Այն հացը զոր ես պիտի տամ իմ մարմինս է զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար»--Ձ. 52:

Ի՞նչ ծանր խօսքեր, խօսքեր որ չրեաներու կողմէ անընդունելի էին, սակայն նորէն Յիսուս քաջաբար վկայեց, գիտնալով հանդերձ որ ո՛չ պիտի հասկնան ու ո՛չ ալ պիտի ընդունին:

Ինչո՞ւ արդեօք Յիսուս այսֆան երկար կը խօսի հացի մը համար և ինքզինքը կը կոչէ *Կենաց Հացը*, որովհետեւ աղօթքը հոգւոյն հացն է: Ո՛չ պատահմունք է ու ո՛չ ալ դիպուած, այլ՝ Յիսուս "հաց" բառը իր բարձրակէտին հասցնելէ ետք *(Ես եմ կենդանի հացը որ իջած է երկինքէն)* ըսելէ յետոյ, Ան կը շարունակէ ու կ'ըսէ. *«Եթէ մէկը այս հացէն ուտէ՝ յախտեան պիտի ապրի. և այն հացը զոր ես պիտի տամ, իմ մարմինս է զոր ես պիտի տամ աշխարհի կեանքին համար»--Ձ.52:* Ֆիզիքական հացի առատութեան մէջ դեռ կայ սովը Հոգեւոր Հացին:

Մինչեւ այս կէտը Յիսուս Իր բազմացուցած հացերուն համար չէ որ կը խօսի, ոչ ալ ցոյց տուած հրաշքին համար, այլ՝ Ան մտքին մէջ ուրիշ նպատակ մը ունի: Այդ նպատակը Իր անձնագործութիւնն է Բեզի և ինձի համար, և ոչ երբեք ուրիշ որեւէ նպատակի: Յիսուս քեկանելով Իր մարմինը պիտի բաշխէ համայն աշխարհի, ուստի կ'ըսէ.

**«Իմ մարմինս ճշմարիտ կերակուր է և
իմ արիւնս՝ ճշմարիտ ըմպելիք»--2. 56:**

Յիսուս Զրիստոս *ապագա՛ն* էր կանգնած անցեալին դէմ: Հացին ոգեղէն Խորհուրդով մարդ արարած պիտի միանայ Աստուծոյ: Յիսուս սկսաւ իր խորհրդաւոր *հաց* խօսքը մանանայով ու վերջացուց զայն Իր պատարագեալ և սրբարար Մարմինով: Վերոյիջեալ մարգարեական խօսքերը, Յիսուս չուսուց տեղւոյն նախանձորդներուն կամ Իր հակառակորդներուն: Ան գիտեր թէ անոնք պիտի չհասկնան, Յիսուս խօսեցաւ սոյն խօսքերը որպէսզի մե՛նք, Երկհազարամեայ Իր հետեւորդները հասկնա՛նք, հաւատա՛նք ու հետեւի՛նք Իրեն:

Ան ըսած էր. *«Հոգի է Աստուած, և անոր երկրպագողները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ երկրպագութիւն ընեն»*: Մակայն Յիսուս գիտեր թէ իր հետեւորդներուն մէջ պիտի գտնուին Թովմասներ, որոնք չուսին հոգեկան գօրութիւնը ըմբռնելու և պաշտելու զԱստուած անխառն հոգիով ու ճշմարտութեամբ: Այսպիսիներուն, Խաչեցեալ Յիսուս կը բեկանէ Իր Մարմինը սրբարար Խաչին վրայ, ու կը բաշխէ Ինքզինք համա՛յն հաւատացեալներուն որպէս Երկնառաք Հաց ու սրբարար որդատունկի բերքը: Հաւատացեալներուն աչքերը աւելի բան մը կը նշմարեն հացին մէջ--հաց և գինի, վերջին ընթրիիքը, ուր Փրկիչը զարմանալի մէկ հրաշքով Հաց եղաւ և հացը՝ Յիսուսի խորհուրդ: Հացն ու գինին յաւերժական Ներկայութիւնն են Սրբագա՛ն Անուութեան՝ աղօթքի:

Անձնամատոյց Հոգի Յիսուս Պաւելի ընթրիքէն յետոյ կ'ըսէ աշակերտներուն. *«Եթէ չուտէք մարդու հրոյիին մարմինը, և չըմպէք Անոր Արիւնը՝ ձեր մէջ կեանք չէք ու նենայր»*--2.54: Այլ խօսքով եթէ չուտէք, չիւրացնէք Ձիս՝ Իմ ապրումս և սէրս հանդէպ իրարու և համա՛յն մարդկութեան, իմ աշակերտներս չէք կրնար սեպուիլ: Մէկը՝ որ իր *«աւենորեայ հացը»* կը խնդրէ Հայր Աստուծմէ, յօժարակամ ըլլալու է բաժնեկցելու իր ունեցածը ուրիշներու հետ, որոնք եւս կարօտ են իրեն: Անեսականօրէն յիշելու է իր պարտականութիւնները և պարտաւորութիւնները, որոնց *յառաջագոյնը սիրեն՛ն է*:

Ի՞նչ է արդեօք աշակերտութեան պայմանը: Չորրորդ դարուն եկեղեցական եպիսկոպոսներ հաւաքուեցան Նիկիոյ ժողովին խմբագրելու Նիկիական Հաւատքի հանգանակը: Նախապէս կեանքի բոլոր ոլորտները թափանցող Յիսուս պատրաստած ու սորվեցուցած էր աշակերտներուն Ի՛ր հաւատոյ հանգանակը, որ յաւերժօրէն պարտ էր պահպանուիլ, ուր Ան կ'ըսէ.

**«Եթէ դուք զիրար սիրէք՝ առով ամէնքը պիտի
գիտնան թէ դուք իմ աշակերտներս էք»:**

--Յով. ԺԳ. 35

Կենդանի հաղորդութեամբ Իր պատգամները փոխանցող Յիսուս, պատկերացուց ու մատչելի դարձուց Իր աջակերտներուն և համայն աշխարհի հաւատքի հանգանակ մը, որ թէեւ ջատ կարճ է, սակայն իր մէջ կը պարունակէ յաւերժաբոյր հաւատամքի ճարագայթող ճշմարտութիւնները: Սակայն Եկեղեցական եպիսկոպոսներ կարծեցին, թէ իրենք լաւագոյնը կրնան շարադրել:

Մեր Տէրը Յիսուս, Իր անձնագոհի ապրումով դիւրահասկնալի դարձուց չօր տեսլականը Իր աջակերտներուն և համայն մարդկութեան: Տէր Յիսուսի մարմինը ուտողներ եթէ պիտի չի կարենան իւրացնել իրենց Փրկիչ Յիսուսը անոնք ալ պիտի մեռնին այնպէս ինչպէս Մովսէսի օրով մանանան ուտող շրեաները: Յիսուս Քրիստոս աղաչանօք խօսեցաւ Իրեն հետեւողներուն ըսելով.

«Սիրեցէ՛ք զիրար. ինչպէս ե՛ս ձեզ սիրեցի»:

Ձոր կը նշանակէ՝ եթէ դուք զիրար սիրէք այնպէս *ինչպէս ե՛ս սիրեցի* ձեզ, ա՛յն ատեն աշխարհ (ձեր զիրար սիրելուն համար) պիտի գիտնայ թէ դուք Իմ աջակերտներս էք»:

Ուստի, մենք հաւատացեալներս երբ ուտենք Յիսուսի մարմինը սուրբ Պատարագէն յետոյ, ու չկարենանք սիրել մեզմէ տարբեր բրիստոնեաները, չեմ գիտեր թէ Յիսուս մեզի ի՞նչ պիտի ըսէ Վերջին Դատաստանին: Եկեղեցի երթալ, Եկեղեցական շնորհակարար արտասանել կամ սուրբ Հաղորդութիւն անել չպատուիրեց Մեր Տէրը Յիսուս, այլ՝ Ան ըսաւ.

«Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէ՛ք զիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէ՛ք զիրար: Եթէ դուք զիրար սիրէ՛ք ատ՛վ ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աջակերտներս էք»:

Ապրիլ 4, 2000
Թորոնթօ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՆՔՆՈՒՓԵԱՆ ՅԱԿԵՐԺԱՅՈՒՄԸ

Երեսուներեք անվերադարձ դարեր առաջ երբ Յասնաբանեայ Պատուերներու կայծակնաբոց գրիչը կը Բանդակէր կրանիտեայ յուշատետրին վրայ, ոչ մէկ տեսութիւն կամ ակնարկութիւն արձանագրուեցաւ *մարմնոյ յարութեան* մասին:

Լուռ էր Մովսէս Օրէնսդիրը *անդէնականի* նկատմամբ: Եգիպտոսի Գահաժառանգ Մովսէս, որ Փարաւոնեան դաստիարակութիւն ստացած ու հմտացած էր հին Եգիպտական կրօնա-հաղափական մշակոյթով ու տեղեակ զմոսումի գիտութեան, անձայն է մարդ արարածին յաւիտենական կեանքին նկատմամբ: Անխօս է Մովսէս նաեւ տիեզերքին ու բնութեան համագոյացութիւնը շարժող զօրութեան որ անմահութիւն կը թրթրացնէ և կ'երգեհոնէ: Անբարբառ է Մովսէս և մունջ ի դիմաց մարդու յաւերժական Բաղջին՝ որ է անվախճան գոյացութիւն:

Հէթանոս մատենագրութիւններու մէջ անհատում են անմահութեան *իմաստասիրակաւ* բարձրաթոյն գաղափարները և *վարկածները* որոնք *մտայողացումներ* են միայն: Մակայն, Հին Կտակարանի Արքազան էջերը զուրկ են յաւիտենական կեանքի որոշ և յուսադրիչ պատգամներէն: Բացառութիւն կը կազմեն միայն Պարսկաստան գերի Բշուած տեսանող մը, Դանիէլ մարգարէն որ միայն *հպանցիկ* ակնարկ մը՝ կայծ մը կը յայտնաբերէ ի մէջ իր բոլոր մարգարէութիւններուն:

Ինչո՞ւ Երկինքի Աստուածը արտայայտութիւն մը կամ յայտնաբերում չէ ըրած Իր սրբազան մարգարէներու միջոցաւ՝ երբ այնքան գեղեցիկ որոնումներ ու գերազանց հոգեյոյզ խորհրդանիշեր կան Մաղմուսներու և մանաւանդ Եսայեայ մարգարէութեանց մէջ:

Ինչո՞ւ Հին Կտակարանի «**Որ էն**» Աստուածը անջջուկ և անխօս է այս մասին մինչեւ Իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի Մարդեղութիւնը:

Տիեզերքն ու անոր անեզր աստղածովերը կերտող Արարիչը որ ստեղծեց Իրեն կերպարանակից ու պատկերալից հիւլէն (մարդը), կը վարանի՞ արդեօք շնորհել Իր մարդ արարածին նաեւ յաւիտենական կեանք:

Ան դատաստանական վճիռ տուած էր կախարդական Եդեմի մէջ, *“Զանցի հող էփր դուն և հողի պիտի դառնաս”*: Ի՞նչ արդարացուցիչ պատճառներով, Աստուած կրնար փոխել այս անբռնաբարելի դատավճիռը: Աստուած ոչ անտարբեր և ոչ ալ անկարեկիր էր երբ կը տեսնէր հազարաւոր մարդկային էակներու անյայտանալը ու վերադարձը դէպի փոշի և մոխիր: Ոչ թէ Աստուած անզգայ էր, այլ Ան մտատանջ էր անոնց մեղանչումով: Մարդ արարած՝ եթէ չփոխէ՛ր իր ընթացքը, եթէ չզնահատէ՛ր բարին և պատուականը ի՛ր *ազատ* կամեցողութեամբ, աստուածային յաւիտենական կեանքի պարգեւը մարդ արարածին, պատճառ պիտի ըլլար անոր ճիւղային ու գազանային

յաւերժացումին:

Յաւիտենական կեանքը, որ պարզեւ մըն է շնորհուած Աստուծմէ Իր մարդ արարածին, *պայմանադրակա՛ն* առանձնաշնորհ մըն է: Բոլոր անոնց որոնք կ'ուզեն ստանալ յաւիտենական կեանքը, ոչ միայն հաւատաւոր՛ւ են Աստուծոյ, այլ վստահելու՛ իրենց կեանքերը աստուածային բարի կամեցողութեան: Ոչ թէ միայն հաւատալ Աստուծոյ գոյութեան [ինչպէս սատանաներն ալ կը հաւատան] այլ իրե՛նք զիրենք *„անէ՛նել և վստահիլ* Անոր: Ինքզինք՛ յանձնել աստուածային Մտփին, մտադրութեան, ծրագիրներուն և ծայրագոյն կատարելութեան, Անոր վախճանական գաղափարականութեան (ideal):

«Որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը ... : Ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է»--Յով. Գ. 16-18:

Յաւիտենական կեանքի և մարմնոյ յարութեան դուռը բացուեցաւ, ու մարդոց շնորհուեցաւ այս պանծալի արտօնութիւնը երբ Յիսուս անսակարկօրէն սիրեց մարդկութիւնը և անսահանջ ու ինքնակամ զոհուեցաւ ազատագրելու Իր ձեռակերտ ու հոգեշունչ մարդ արարածը:

Աստուած՝ Իր Միածին Որդւոյն անձնագոհողութիւնը, Անոր կարծեցեալ պարտութիւնը փոխակերպեց կենարար յաղթութեան՝ Յարութեան: Տիեզերքի այս տիտանեան մենամարտին մէջ, չարը (Մատանան) կարծեց յաղթահարած ըլլալ զԱստուած: Մարդեղեալ Յիսուսի *վեհապանծ Յարութեամբ*, երբ մարդ հաւատա՛ց Անոր, մարդ արարածին և շնորհուեցաւ յաւիտենական կեանք ու մարմնոյ յարութիւն:

Մարդկային փորձարական իմացականութիւնը երբ տեսաւ Յիսուսի Խաչելութիւնն ու մահը,, յայնժամ մարդուն զգայնութիւնը ըմբռնեց աստուածային չայրութեան լուռ վիշտն ու կսկիծը:

«Քանի որ Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» --Յով. Գ. 16:

Այս յաւիտենական կեանքի պարզե՛ւն է, որ շնորհուեցաւ մեզի մարդ արարածներուս, որպէս Աստուածայայտնութեան Աւետարան, ոչ թէ Մինա Լեռան կայծակնագոռ գոչիւնով ու զարհուրելի սարսուռներով, այլ՝ Գողգոթա սարին Յիսուսաբոյր ինկարկութեամբն ու ներումի անձնագոհողութեամբ, որ կ'անուանենք,

«Յարութիւն»

համբոյրն Յոյսի և Հաջտութիւն:

Ապրիլ 7, 1996 Թորոնթօ

ԱՆՓՈՒԱՐԻՆԵԼԻ ԵՒ ԲԱՅԱՐՁԱԿ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆՆ Է

Յիսուսի Յարութիւնը կը մնայ գագաթնակէտային իմաստով աշխարհի ամենէն փառապանծ և ներշնչող արարքն ու իրականութիւնը, փառապատկեր Զրիստոսի կեանքին և կտակին: Զրիստոսի Յարութիւնը կը յայտնէ ստեղծագործութեան նպատակը, գոյաբանական պատճառը, թէ ինչու եկած ենք այս աշխարհ և ուր կը դիմենք:

Մարդ իր ապրելու տենչը, իր կեանքի իմաստը կը ստանայ Յիսուս Զրիստոսի հրաշափառ Յարութեան լոյսէն: Ան յուսադրեց մեզ ըսելով.

«Ես իսկ եմ յարութիւնը և կեանքը. ան որ ինձի կը հաւատայ, թէպէտ և մեռնի, պիտի ապրի» --Յով. ԺԱ. 25-26:

Յարութիւնը միայն մահէն յետոյ ապրուելիք վիճակ մը չէ, այլ՝ ան մարդկային ապրում մըն է որ կը սկսի Զրիստոսով ներշնչուած և ներթափանցուած ու տիրապետուած, զԱստուած ճանչնալէ և զԱյն սիրելէ յետոյ: Հաւատացեալ մը պարտ է ապրիլ ու գործել Զրիստոսի ապրած և ուսուցած ճշմարտութիւններով, բարոյական սկզբունքներով և հոգեւոր արժեքներով, մէկ խօսքով՝ մարդ արարածը յաւիտենական արժեքներով կը յաւերժացնէ իր կեանքը թէ՛ երկրի վրայ այժմ և թէ՛ մեռելներու յարութենէն յետոյ:

Յիսուսի "Վերստին ծնունդ"ը նիկողէմոսին, սոսկ մահէն ազատ ըլլալու հոգեկան գոյավիճակ մը չէ: Յիսուս ըսաւ անոր.

«Ես իսկ եմ յարութիւն և կեանք»,

Յիսուս մահը խորտակեց Իր Յարութեամբ, ինչպէս լոյսը կ'անյայտացրնէ խաւարը: Այնպէս ապրեցաւ Ան, և սորվեցուց մեզ ապրիլ, որ մահը չի կարենայ վերջ դնել մեր կեանքին: **Դանիէլ Վարուժան** կ'երգեհոննէ ըսելով.

**«Մեր մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մէջ իրենց
Ու անհամբեր հեռո՛ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդափեղեղ գալուստին
Արջալոյսի մ'Արջալոյսի մը՝ որուն
(Հաւատացէ՛ք ինձ Մայրեր)
Ես ոտնաձայնը կ'առնեմ...»:**

Յիսուս Զրիստոս՝ Իր Յարութեամբը ապացուցանեց, թէ վերջին Յաղթա-

կանը մահը չէ, այլ՝ Ի՛ր *Isos'uf'n* է: «Ան որ Յարութիւն տուա Յիսուսի՝ մեզի ալ յարութիւն պիտի տայ Յիսուսի հետ: ... Որովհետեւ, «Զենք նայիր տեսանելի բաներուն, այլ՝ անտեսանելիներուն, որովհետեւ տեսանելիները ժամանակաւոր են, իսկ անտեսանելիները՝ յաւիտենական»--Բ. Կորնթ. Դ. 14, 18:

"Զարը" յունարէն *kakos, kakia* կը հնչուի որ կը նշանակէ գէշ և յունարէն ու եբրայերէն իմաստով անարժէք, ապականած և անյոյս: "չար"ը աւելի կ'ակնարկէ Մատանային, անոր անձին և դիտաւորութեան մէջ եղած չարութիւնը, և ո՛չ թէ մեղանչումը: Մեղքը կամ մեղանչումը՝ Աստուծմէ հեռանալ է, կեանքը և գոյութիւնը կորսնցնել է: Զարութիւնը մեղանչելու հակամիտութիւնն է: Զարը, ենթական կը դրդէ՝ որ ան մեղանչէ: Զարը, մեղքին ակնադբիւրն է: Յիսուս եկաւ աշխարհ տապալելու չարը, ու ներում ջնորհելու զղջացող մարդոց մեղանչումին--Մատթ. ԺԸ. 26-27: Մեղանչումը, բարիէն մոլորիլ է, սխալիլ ու թիրախին չհասնի՛լ է: Ճամբան կորսնցնե՛լ է: Աստուծմէ օտարանա՛լ է:

Ռայնհոլտ նիպուր, Աստուծոյ վրայ դրաւ իր վստահութիւնը, որ աշխարհէ անդին է, սակայն գործօն պատմութեան մէջ: Անոր սերն ու ներումը կ'ազնուացնէ ու կը բարձրացնէ մարդկային ապրումը և Անոր յուսադրիչ խոստումը կ'ազատէ մարդը հիասթափութենէ: Այսպիսի յոյս մը կու գայ մի միայն Աստուծոյ վերջնական յաղթանակի հաւատէն: Յիսուս ցոյց տուաւ աշխարհի, թէ Աստուծոյ սիրոյն և ողորմութեան առջեւ խաւարը կը փախչի, մէզը կը մեկնի, մտախուրդը կը հեռանայ, աղջամուղջը կը սպառի:

Երբ յաղթանակ շահինք մեղքին դէմ, մեր ճշմարիտ իսկութեան (*աստուածային կերպարին և նմանութեան*) կը վերածուինք: Հոն ուր կամք կայ, կարենալ կայ, և ուր կամենալ կայ, յաղթանակ կայ: «Աշխարհի վրայ յաղթանակ տանողը մեր հաւատն է»--Ա. Յով. Ե. 5:

«Արդ, ո՛վ կը յաղթէ աշխարհին, եթէ ոչ ան՝ որ կը հաւատայ թէ Յիսուսն է Աստուծոյ Որդին»

Յիսուսի Յարութեան փառքին ու յաւիտենական երանութեան արժանի ու մասնակից ըլլալու համար՝ պէտք է անցնիլ Գողգոթայի բլուրէն, Աւագ Ծաբթուան չարչարալից Խաչի ճանապարհէն: Առանց գոհողութեան՝ յաղթանակ չի ջահուիր, առանց խաչելութեան՝ Յարութիւն չկայ: Յիսուսի խօսքերէն առաջին երեքը ներումի և սիրոյ խօսքեր էին, յաջորդ երկուքը՝ տագնապի և տառապանքի, վերջին երկուքը՝ գոհութեան և յաղթանակի: Աստուածային ուժը սրբութեան և յաղթանակի վերմդող գօրութիւնն է:

Յունուար 6, 2001

Թորոնթօ

ԹԷ ԻՆՔ ՏԵՍԱԾ Է ՏԷՐԸ

Վերոյիջեալ ստոյգ վկայութիւնը կու գայ Մարիամ Մագդաղենացիէն ոչ որպէս հայեցական կամ ցնորական տեսական մը, այլ՝ իբրեւ աննախընթաց և փառապանծ պատահար դէպք իրականութիւն:

Աւետարաններու փրկագործող պատմագիտութեան մէջ, Մարիամ Մագդաղենացին կը յայտնաբերուի որպէս *հերոսուհի*: Մակայն ոչ աստուածներու ցեղէն, նման Աթենայի կամ Ռդիսեւսի որոնք բիրտ ուժի ներկայացուցիչներն էին, այլ՝ Մագդաղենացի Մարիամ պատկերեց և բեմադրեց *սիրոյ և անասան հաւատքի* հոգեղէ՛ն հերոսութիւնը: Ան ցուցաբերեց դիւցազնութեան այ՛ն յատկութիւնը որ կը յաղթահարէ «ես»ին հպարտութեան, մարմնի մեղանչական մղումներուն, և ի գին ամէն զոհողութեան կ'ընտրէ յաւիտենական և անփոփոխ արժեքները փոխանակ ներկայի անստոյգ և ժանտահոտ հաճոյքները:

Չափազանցութիւն պիտի չ'ըլլայ երբ ըսենք թէ Մարիամ Մագդաղենացիին առաքինութիւններուն ազնուագոյնը եղած է իր ***յարասեւութիւնը*** այն կոչման և սիրոյն որուն փարած է ան աներկիւղ և անյապաղ:

Առաջին անգամ մեր ուշադրութիւնը կը գրաւէ ան իր խոստովանանք ապաշխարութեամբ՝ երբ կը լուայ Գալիլեացի Մարգարէին լուսաբեր Ոսկերը ու կ'օժէ զանոնք իր թանկարժեք իւղով: Երկրորդ, իր սպասաւորութեամբ կը ծառայէ ան անդու և անհուն՝ Նազովրեցի Մարդեղեալին բոլոր Բարոզչութեան ընթացքին: Երրորդ, կը տեսնենք զինք Գողգոթայի Խաչեցեալին ստորեւ: Ան փարած է խաչափայտին և հոգեպէս կը բաժնեկցի Յիսուսի տառապանքին և Անոր ուղղուած բոլոր լուսանքներուն և հայհոյութիւններուն: Բոլոր աջակերտները լքած և փախած են իրենց Տէրն ու Վարդապետը, սակայն ո՛չ Մարիամ Մագդաղենացին: Ան չի վախնար սպանուելէ որովհետեւ ինքզինք մեռած կը սեպէ Յիսուսի համար:

Ոսկիի հմայքին և վաւաջոտ կերծ սերերու համար չ'ապրիր ան այլեւս, այլ գտած է Աստուծոյ Թագաւորութեան արժեքաւոր մարգարիտը: Վաշխառու հարուստներուն և կեղծաւոր կրօնասերներու քամահրանքները զինք չեն նուաստացներ: Հռովեացի զինուորներուն մտրակները և սպառնալիքները զինք չեն խոռվեր և վախցներ: Ան կը շարունակէ կանգնիլ տէր այն երկնառաք Մարգարէին որ զինք փրկագործած է մեղքի ճիրաններէն և Մատանայի ծառայութենէն: Ան կը կանգնի հոն Սուրբ Յիսուսածին մօր հետ որպէս յենակից և ցաւակից բաժնեկցելու որդեկորոյս մօր մը խոցոտուած սրտին:

Իր յարասեւութիւնը և նուիրումը Յիսուսի՝ կը վարձատրուի երբ մայրամուտէն առաջ կը ծագի նոր յոյս մը՝ Նիկողիմոս իջխանին և Յովսէփ

Արիմաթացիին գալով որ իջեցնեն Յիսուսի Մարմինը և թաղեն: Մագդաղենացին յամառօրէն կը ջարունակէ բերել իր ներկայութիւնը և ծառայութիւնը նոյնիսկ մեռած (ուրիշներու կարծիքով պարսուած) Յիսուս Մարգարէին:

Մեզմէ ոմանք, Յիսուսի թաղումէն վերջ, մենք զմեզ ազատ պիտի զգայինք ընել ինչ որ ի նպաստ *մեզի* է, ինչ որ *մե՛զ* կը հետաքրքրէ և ինչ որ *նիւթապէս* շահաբեր է:

Բայց ո՛չ Մարիամ Մագդաղենացին:

Ան՝ կերպով մը իմացած էր լուսահանդեձ. Մարգարէէն, թէ մեռնելէն յետոյ Յարութիւն մը, աստուածահրաշ դէպք մը պիտի պատահի: Որքան ալ անհաւատալի և ցնորական կը թուէր իրեն, սակայն իր ենթագիտակցութեան մէջ այդ մանանեխածիլ հաւատքի ճառագայթը զինք կը խթանէր:

Կիրակի առաւօտ կանուխ, արջալոյսէն առաջ, ճամբայ կ'ելլեն ինք և այն կիները որոնց ալ համոզած էր երթալ և այցելել Յիսուսի գերեզմանը: Հոգեկան մղում մը զինք կ'առաջնորդէր երթալ անուշահոտ խունկ նուիրել մեռած Յիսուսին: Կը գալէ փոքր խումբը հերոսուհիներու՝ որոնք անվախ և անվեհեր, մոռցած են գայլանման մարդ-գազանները: Կ'անցնին Բաղաբին պարիսպէն դուրս և կ'ուղղուին դէպի գերեզման:

Այգալոյսող շողերու ընդմէջէն կը ներխուժէ Երկնային Զօրքերու գունդը որոնք կը պապանձեցնեն գերեզմանին պահակները և իրենց լուսափայլ և հոգեղէն ներկայութեամբ կը շրջապատեն Յարուցեալ Զրիստոս Յիսուսը:

Մահը յաղթահարուած ու գերեզմանը Բանդուած է այլեւս: Հետիոտն, կիները կը զգան տիեզերական իրար անցում և փայլատակում, սակայն կը կարծեն թէ բնական պատահարներ են: Մեծապէս կը զարմանան երբ կը տեսնեն գերեզմանը բաց, պահակները բացակայ և Յիսուսի Մարմինը անյայտացած: Ժամանակ մը, Յիսուսի Մարմինը ասդին անդին փնտռել և խուզարկել յետոյ, Մագդաղենացիի ընկերուհիները՝ յուսաբեկ կը վերադառնան տուն:

Մեր հերոսուհին, սակայն, կը ջարունակէ իր յարատեւութեանը մէջ: Նորէն կը մտնէ գերեզմանէն ներս ստուգելու համար թէ իրապէ՞ս հոն չէ Յիսուսի Մարմինը: Յանկարծ կը բացուին անոր աչքերը և կը տեսնէ հրեշտակներ որ նստած են մին Գլխուն և միւսը Ոսբին տեղը Յիսուսին: Անոնք կ'աւետեն իրեն *առաջիկ*, աւետիար Յարութեան ըսելով:

***Այստեղ չէ, այլ Յարութիւն առաւ:
«Ինչո՞ւ մեռելներու մէջ կը փնտռէք ողջը***

Մագդաղենացին՝ խանդավառ և հրեշտակներու տեսիլքէն յափշտակուած

դուրս կ'ելլէ գերեզմանէն, սակայն չի վերադառնար սուն: Ան կը շարունակէ իր հետազօտութիւնը պարտէզին մէջ, կարծես թէ գօրութիւն մը, ոգի մը զինք կը կապէ այդ պարտէզին: Յոգնած և ճարահատ կը նստի ֆարի մը վրայ ու կը սկսի մտածել պատահած դէպքերուն և հրեշտակներու տեսիլքին վրայ, երբ յանկարծ կը լսէ ջջուկ մը ու ետ դառնալով կը տեսնէ Մէկը որ իրեն կը թուի ըլլալ պարտիզպան մը որ կարեկից ձայնով կ'ըսէ իրեն.

***«Ով կին, ինչո՞ւ կու լաս,
զո՞վ կը փնտես»:***

Ճուարած ու խոռված, Մագդաղենացին ամենայն լռջութեամբ կը հարցնէ կարծեցեալ պարտիզպանին թէ, եթէ ինք վերցուցած է Յիսուսի Մարմինը թող ըսէ իրեն, որովհետեւ եկած է անուշահոտութիւն դնելու Անոր վրայ որ իրեն համար Մարգարէ մըն է: Յիսուս ի տես Մագդաղենացիին յուզիչ արցունքներուն և հաւատարիմ յարատեւութեան, կը վարձատրէ զինք յայտնելով Իր իսկութիւնը մէկ բառով.

«Մարիա՛մ»:

Մագդաղենացին ի տես Յարուցեալ Յիսուսի, հոգեկան յափշտակութեան մէջ կը խոյանայ համբուրելու իր Փրկչին ոտները, ու տեսնելով գամերուն հետքերը, կը բացագանչէ,

«Ռաբբու նի»:

Նախկին մեղաւոր կինը՝ բնական մղումներու գերին, Յիսուս կը փոխակերպէ ու կ'ուղղարկէ որպէս առաջին առաքեալը և դեսպանը՝ աւետելու Փառապանծ Յարութեան Աւետիսը Իր աշակերտներուն, հրահանգելով զինք.

«Գնա՛ դու ն իմ եղբայրներուս ու ըսէ՛ անոնց թէ՛ էս կ'ելլեմ դէպի իմ Հայրս և ձեր Հայրը, դէպի իմ Աստուածս և ձեր Աստուածը».

Մարիամ Մագդաղենացի կու գայ և աշակերտներուն կը պատմէ,

«Թէ ինք տեսած է Տէրը»:

Դո՛ւն, ո՞վ որ ես, տեսա՞ծ ես **Յարուցեալ Տէրը**: Տեսա՞ծ ես Զինք քու հոգւոյդ ջգքերովը: Այն հոգւոյդ որ կայծն է Արարիչ Աստուծոյդ:

Ապրիլ 7, 1996

Թորոնթօ

